ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ բարեկամ,

Հայաստանի համայնքների միությունը Հայաստանի բոլոր համայնքների միասնական ձայնն է: Գործունեություն ծավալելով 1997 թվականից և միավորելով Հայաստանի բոլոր համայնքները՝ Միությունը կանոնավոր կերպով զբաղվում է իր անդամ համայնքների շահերի պաշտպանությամբ՝ նպատակ ունենալով Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգն ավելի կայացած, արդյունավետ ու անկախ տեսնել: Վերջին 20 տարիների ընթացքում ՀՀ կառավարության, պետական կառավարման այլ մարմինների, հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցաբար Միությունն իր շոշափելի ներդրումն է ունեցել Հայաստանում տեղական ժողովրդավարության զարգացման գործում:

Իր գործունեության ընթացքում Միությունը

- մի հարկի ներքո միավորել է Հայաստանի բոլոր համայնքները՝ քննարկելու տեղական ինքնակառավարման համակարգի հիմնախնդիրները և ձևակերպելու ընդհանուր մոտեցումներ՝ համագործակցելով նաև ոլորտի փորձագետների հետ,

- ներկայացրել է տեղական ինքնակառավարման մարմինների շահերը Հայաստանում և Հայաստանից դուրս՝ հետամուտ լինելով Հայաստանի համայնքների շահերից բխող օրենքների, իրավական ակտերի, ռազմավարությունների և քաղաքականությունների ընդունմանը,

- վերապատրաստել է հազարավոր համայնքային ծառայողների, համայնքների ղեկավարների, ավագանու անդամների՝ զարգացնելով վերջիններիս մասնագիտական և գործնական կարողությունները,

- մատուցել է խորհրդատվական ծառայություններ՝ անդամ համայնքներին տեղեկացնելով տեղական ինքնակառավարման ոլորտի զարգացումների մասին և մշտապես արձագանքելով անդամների մոտ ծագող իրավական, ֆինանսական և վարչարարական բնույթի հարցերին,

- իրականացրել է տեղական ժողովրդավարության զարգացմանը նպաստող ծրագրեր:

Միությունն իր գործունեությամբ ձգտում է, որպեսզի Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքական համակարգում ունենան ուժեղ և վստահելի ձայն, կարողանան միասնական ջանքերով ներազդել քաղաքական օրակարգի վրա և սահմանեն այն պետական մարմինների հետ համագործակցաբար՝ ի շահ ՀՀ քաղաքացիների, համայնքների և տեղական ժողովրդավարության:

Էմին Երիցյան
Հայաստանի համայնքների միության նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ